

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պուրկարից Տամար


Տարեկան ֆրք 10

Վեցամսեայ " 5

ԿԱՆԻՍԻԿ

20

ՍԱՆԳԻՄ



ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ֆրք 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

20

ՍԱՆԳԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաւոր օրերը: Մա-
նուցման տողը 10 Մանդիմ: Երկու թիւ ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Մանդիմ:
Չհրատարակուած գրութիւնը եւ յօդուածը:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

Մինչեւ յառաջիկայ օգոստոս
մէկ բաժանորդագիրն չի վճարուին իսկ
թերթը չըկելը վերջնապէս որոշած ենք
զադրեցնել:

«ՄԻԹԷ՝ ԵՍ ԻՅԵՄ»

«Հայերի» անցեալ շարժումն թը-
ւոյն «Տգեղ պատկերներ», ու մէջ գրուած
55 տարեկան սիրահարին շահատակու-
թեանը առթիւ կարգ մը 55 նոյննր՝
պատգամաւորներու բերնով մնդի կը
հարցնեն թէ «միթէ ե՞ս իցեմ»:

Տեսակ մը անորոշ կասկած ներշն-
չող տապաւորութեան տակ, անդապելի
ծիծաղ զգացելնք թէ մի գուցէ մէկ
քարով 3—4 կամ աւելի թռչուններ
զարկած ըլլանք, որովհետեւ քանի քա-
նի անգամներ որ այս տեսակ մար-
թիւները ձայնած ենք, հետեւեալ օրը
անպատճառ չորս կողմէն ինքզինքնուն
վրայ կասկած ունեցողներ մեզի կը դի-
մեն և կը հարցնեն «միթէ ե՞ս իցեմ»:

Անխառն գոհունակութիւն զգալով
որ «Հայերի» իր նպատակէն հառած է
ասանկով, միանգամ ընդ միշտ կը յայ-
տարարենք թէ, երբեք մատնանիչ չենք
ըներ զանոնք՝ որոնց համար որ գըր-
ուած ըլլայ, այլ կըսենք, «Ո՛վ որ վը-
րան առնէ՝ անոր համար է»:

ԱԶԳԱՅԻՆ

Բարիդէն կը գրեն թէ Վսեմ. Նու-
պար բաշա իր հիւանդութենէն բոլորո-
վին ապաքինած ըլլալով, վերջերս ըս-
կած է պտուիլ:

—0—

Անցեալ չորեքշաբթի գիշեր, յու-
լիս 8, ի Կ. Պոլիս Գառնդիւղի մէջ ըմ-
պանդարեանի մանկապարտէզէն հրդեհ
ծագելով, հինգ ժամուան մէջ Մուրա-
տիէ, Ճէվիլ փողոց, Պատէմ փողոց և
Մօտա ճատտէսիին մէկ մաւր միսիր
զարձուցեր է: Ընդամենը 95 շէնքեր,
մեծ մասամբ հայերու սեպհականութիւն
և բնակութիւն, այս հրդեհին զոհ դա-
ցեր ե: Հրդեհի միջոցին Պատէմ փո-
ղոցի մէջ տղայերքէ բռնուած հայ կին
մը բոցերու մէջէն հրաշքով ազատել է:

Սպանդարեան մանկապարտէզը քիչ
որ առաջ էսքէրեան ընկերութեանը ա-
պահովագրութեան տրուած ըլլալուն պատ-
ճառաւ, կասկածի տեղի տուեր և այս
մասին քննութիւն մը բացուել է:

—0—

ՏԳԵՂ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Անցեալ իրիկուն ութ տարեկան տղեկ
մը գինետունէ մը ներս կը մտնէ, ոտքերը
բոպիկ, փոշիներու մէջ կոխուած, ու սեղա-
նէ սեղան կը վազվուտէ «Տրամմեցէք, ըն-
տիր սիկարի թուղթ և լուցկի ունիմ» ըսե-
լով: Ոմանք կ'առնեն, ոմանք կը վռնտեն ու
մէկ քանիներ ալ կը հրմշտկեն: Պզտիկը կը
տխրի, պարապ անկիւն մը գտնելով կը կրծ-
կտէ, մէկ ձեռքը զլխուն տակը, միւսովը իր
գանձը, վաթսուն փարայի դրամապիւսը կը
գրկէ, գլխարկն ալ քովիկը կը դնէ, ու քանի
մը վայրկեան վերջը կը սկսի մշիկ մշիկ բնա-
նալ: Գինեպանը անոր մօտենալով կարթն-
ցնէ, ազդարարելով որ երթայ, ինչուն որ ա-
տենը ուշ էր: Պզտիկը լալով կը պատասխա-
նէ թէ մայրիկը պիտի ծեծեր զինքը, ու ա-
նոր համար չէր ուզեր տուն երթալ: Մար-
դը փայլուն դրամ մը կը դնէ անոր ափին
մէջ, երիտասարդ մ'ալ անոր կը հետեւի,
ուրիշներ ևս մասնակցելով՝ օրուան պէտքին
չափ դրամ կուտան: Անկարելի է պատմել
տղուն ուրախութիւնը, ոտքը գետնէն կտրած,
խայտալով կը մեկնի: Յանկարծ դրան դուր-
սի կողմէն մեծաշունդ ապտակի մը ձայնը
կը լսուի, որուն կը յաջորդէ անէծքը. «Ճը-
ղակտոր, ճղիկ ճղիկ ըլլաս, շուն շանորդիդ»
խեղճ պզտիկը ձեռքերովը երեսը ծածկած
լալով կը պաղատի մօրը որ չի ծեծէ. «մայ-
րիկ, ինծի մի՛ ծեծեր. այսօր ալ վաստկեցայ.
աս աղաները տուին. ու ձեռքի դրամը գար-
շելի մօրը ափը կը լեցնէ. սակայն ճիւղ
մայրը մտիկ չընելով, ապտակները կիջեցնէ,
որոնց ձայնին մէջ կը խեղդուին պզտիկին
«մայրիկ. չէ՛, չէ՛, ինծի մի՛ ծեծեր» խօս-
քերը:

Փ

Բ.

Անցեալները բարեսիրտ ազգային մը
լուցկի և սիկարի թուղթ ծախող վերոյիշեա-
լին պէս պզտիկի մը մօրը առաջարկեր է որ
տղան իր պաշտպանութեանը յանձնէ, զայն

կրթելու, մարդ ընելու համար. բայց կինը
սա պատասխանը տուեր է. «Անիկա իմին
սէրմայէս է, չեմ իտար»:

ԲԱՒԻ Է

Բա՛ւ է Գաւրուն եղբմական
Որքան խնկես սրտիս խորան.
Ալ չեմ սիրեր քո բոյր աղօթք,
Քանի սիրտս է մութ և աղօտ:

Բա՛ւ է Սոխակ, որքան երգես,
Ալ չեմ կարող ունենդրել բեզ.
Ձի ա՛լ զարնէ քնարս խանութիւ,
Իմ վերքերը բիւր և անթիւ:

Բա՛ւ է որքան Սի՛րի շնչես զով,
Ալ չեմ ծծեր բեզ հաճոյքով.
Ձի ո՛հ, իմ հէք, թաղծեալ հոգի,
Անշէջ հրով կը բորբոքի:

Բա՛ւ է որքան հոգիս վճակ,
Թող ինձ պահ մ'այդ անցքդ շիտակ.
Թող իմ սրտի արեան վտակ,
Հոսի անկէց կուտակ կուտակ:

Բա՛ւ է որքան այգպէս լճակ
Ունիս խաղաղ անդորր վիճակ,
Փութով կուգամ ձգել քու մէջ
Իմ սիրտն, որ ո՛հ, կայրի անշէջ:

Բա՛ւ է որքան փայլիս Լուսին.
Ալ միշտ կատեմ բեզ ընդ կուսին.
Ձի ըլլալէս ձեզ սիրահար,
Եղայ այսպէս տգոյն նիհար,

Բա՛ւ է որքան շողաք Աստղեր,
Ի՛նչ կամարն երկնից, յեթեր,
Ձի ձեր ոչ կայծ, ոչ շող ոչ լոյս,
Ո՛հ, չեն ազդեր այրած հոգւոյս:

Բա՛ւ է որքան ապրիմ Աստուած.
Քանի կաւ է իմ հաստուած,
Բաւ է այս կեանք ծանր բռն իմ.
Բաւ իմ հառաչք, թող ա՛լ մեռնիմ:

Բա՛ւ է որքան ծագիս Արեւ ,
Ալ չեմ ուզեր որ տաս բարե .
Զի կը ցանկամ երթալ հոն՝ ուր
Ո՛հ միշտ տիրէ խաւար տխուր :

Բա՛ւ է որքան ինձ երգ , Ներքող ,
Թողէք կարգամ ինձ անէծք , թող .
Ու զայն մարդիկ առնեն 'ի կիր ,
Գերեզմանիս տապանագիր :

Յ . Մ .



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐԴԻԻՆՔ

(Շար . և վերջ տես թիւ 65)

ԱՂԶԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Նոյնպէս երեք հարիւր աշակերտուհի
ունեցող վարժարանէ մը 5 տարուան միջոցին
եթէ 30 աշակերտուհիք շրջանաւարտի վը-
կայական ստանան , մնացեալ 270ը ինչ կըլ-
լան .

Պատասխան ,

- 10 Հաս Ասղնագործ . — Եղբօրը բսակ
մը անգամ շինել չ'կարողացող :
- 20 " Ճարտարուեստ . — Դիմագծու-
թեան մէջ :
- 20 " Տնտեսագետ . — 5 փարայի
արժէք ունեցող բանին 40
փարայ տալու վարպետ :
- 10 " Բանաստեղծ . — Սիրահարական
նամակներ խմբագրող :
- 40 " Տանտիկին . — Տունը տակնու-
վրայ ընող :
- 20 " Երաժիշտ . — Անպատկառ ե-
ղանակներու երգիչ :
- 20 " Գծագրիչ . — Իւր գէմբը գծող—
ներկերով թունաւորիչ :

- 30 " Ձեռագործ . — Ձեռքէն ամենեին
չիգար գործ :
- 20 " Թուաբան . — Մատուցներովը
համրող :
- 60 " Ճարտասան . — Սիրեմ՝ բայը խո-
նարհելու մէջ :
- 10 " Տրամաբան . — Ծուլութիւնը
պաշտպանելու մէջ :
- 10 " Հոգեբան . — Ծնողացը հոգին
հանող :

270

Վարժապետն ու աշակերտը .

— Պարոն Գէորգ , սա հագած կըրկ-
նոցդ ինչէ՞ շինուած է .

— Չուխայէ .

— Չուխան ինչէ՞ կը շինուի .

— Բուրդէ .

— Բուրդը ո՛ւսկից կը յառաջանայ .

— Ոչխարէն .

— Ուրեմն կրկնոցդ ո՞ր կենդանին շի-
նած եղաւ .

— Հայրիկս :



“ԱՇԽԱՐՀ”

Շաբաթաթերթ

Գրական , Գիտական և Քաղաքական

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայտմ
չաբթուս յայտնեցաւ . դպիրքն երգեն
ընդ ժամկոչս , տան աւետիս Լոնսոնի :
Ծնաւ նոր “Աշխարհ” ի մեծ Վառնա
քաղաքի , նաղարբէկեանք , ցնծացէ՛ք ,
զի վասն ձեր մարմնացաւ :

“ ”

(Այս նորածինը յառաջիկայ կիրակի,
յուլիս 25ին ոտքի պիտի ելնէ) :

— () —

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

2.

Յ. — Գ.

Վայելուչ հասակով, ոսկրոտ, գեղինի վրայ, ոչ նիհար ոչ գէր, 32էն 35 տարեկան, աչքերը սև չեն, կապոյտ ալ չեն, երեսները կարմիր, վերջին նորաձևութեան համեմատ ծնօտին վրայ նուրբ և սրածայր մօրուք մը, Շահէնն 'ի Սիպիրի աքսորականին յիշեցնող:

Շնորհալի բալուածք մը, կոտրտուք, ուղիղ, ձեռքի հովանոցը որ իրեն տարեկից ըլլալու պատիւը ունեցած է, տարիներու ընթացքին մէջ հասակէն մաս մը կորսնցնելով կարճցած է, սակայն անբաժանելի բարեկամ մ'է ո՛ւր որ երթայ:

Քալած ատենը ինքնիրենը բան մը հաշիւ ընելով գլուխը կախ է, քիչ մը ետքը մէկէն 'ի մէկ աչքերը կը փայլին, դէմքին վրայ ծիծաղ մը կը նշմարուի, ու այն միջոցին կը նմանի այն խմբագրին, որ նոր բաժանորդ մը կը գտնէ իր թերթին. երբեմն ալ անանկ աճապարանքով կը բալէ բազմութեան մէջ, հրելով հրմշտկելով, որ կարծես մէկը կը բնտուէ անոր գործ մը հարցընելու կամ ձերբակալել տալու համար:

Բաւական կոկիկ կը գրէ հայ ու թուրք լեզուները, նոյն պէս ալ կը խօսի. բայց երբեմն խօսքին թելը կը կորսնցնէ ու «ինչը» կըսէ գեր մարդկային ճիգեր ընելով, ուղեղը այնչափ կը յոգնեցնէ որ գեռ չի գտած՝ մինչև ճակատը կը կարմրի ու ջուրերուն մէջ կը մնայ:

Խօսելու ու գրելու ատենը մարդու խաթըր կէօնիւղ չի նայիր. ինչ գաղափար որ կազմած է մէկուն վրայ, շիտկէ շիտակ կը զուրցէ, փոյթը չէ որ ան կը նեղանայ կամ կը բարկանայ ու ատով նիւթական փնաս առաջ կուգայ. որո՞ւ հոգ. Պ. Յ. Գ. իր պարտքը կատարած է. պատշաճութեան օրէնքներ, կենցաղագիտութեան պայմաններ, ատոնք բառարաններու մէջ կարգացուած բաներ են, իր բով կուտ մը չեն արժեր:

Կռուանին վրայ հաստատ կեցող մարդ մը, տարիներով չի մոռնար անցեալը, իր խօսքը քաղեցնելու համար հոգի կուտայ. եղբորը կամ ընկերոջը սիրոյն, ըսածը գրածը ետ չառնէր, չի հերքեր. իր լուրերը ու տեղեկութիւնները միշտ մեկնապաշտ մեկնադրութեան են, բայց ինչ օգուտ որ ատոնք ամփոփելով, եղբակացնելով ներթիւնքելի չի կրնար ընել:

Տարին 12 ամիս իր աշխատութենէն վերջը պարտաւ ժամերուն, կը սիրէ դատաւարութիւններու ներկայ գտնուիլ, դատ ունենալ, և իրաւ ալ ամեն ատեն մէկուն հետ գործ մը ունենայ, շահի կամ՝ կորսնցնէ՝ խնդիր չի կայ, միևնոյնն է, հերիք է որ իր հակառակորդին հետ դէմ առ դէմ կը զլուծուի, կը կռուի ու կը դատուի:

Երբ հետգ խօսի, աչքերուդ մէջ կը նայի, սիրտդ կարգաւու համար. շրթունքներուն վրայ կը տեսնուի ժպիտ մը որ բնականէն աւելի արուեստականին կը մօտենայ, բայց որովհետև սովորութիւնը երկրորդ բընաւորութիւն մը կը դառնայ մարդուն, անոր համար բան մը չենք կրնար ըսել:

Ապառնայիքէ, բանտէ ու աքսորէ վախցող մարդ չէ. ամեն գործի մէջ առաջնութիւն կուզէ ունենալ: Վէպեր, հերոսային պատմութիւններ, ու առասպելանման զէպեր ու անցքեր կերեւեակայէ. ու ատոնք պատմելով քիզի կաշխատի որ հաւատաս, ու եթէ չի համոզուիս՝ կը բարկանայ, քիչ մը կծու կը խօսի, բայց միշտ քաղաքավարութեամբ:

Եղած է ատեն որ յախուռն դործերու համար անձը փնասած է. բայց կարեորութիւն չէ տուած, զղջալ, վերջացնել չը գիտէ. ուրիշ անգամ նորէն կը կրկնէ, նորէն կը փորձէ, վայրկեան մը մտքէն չանցընելով հատիլ. այլ միշտ իրաւունքի պաշտպատ, հնազուգի տէր մնալ իր սկզբունքը եղած է:

Պ. Յ. Գ. ամեն ատեն կը ներկայացնէ դէմքը այն մտածկոտ մարդուն, որ կըսէ. «քեզի բան մը պիտի ըսէի, բայց միտքս չի գար կոր, արդեօք ինչ էր:»

ՀԵՏԱՔՐԻՐԱԿԱՆ

ՆՄՈՅՇ ՄԸ ՀԻՆ ԼՐԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Գաղափար մը տալու համար 3 բա-
որդ դար առջի եւ ներկայ աշխարհաբանին
անհուն տարբերութեան վրայ՝ 1812ին հը-
րատարակուած ԴԻՏԱԿ ԲԻԻՋԱՆԴԵԱՆ ա-
նուն կիսամսեայ հանդէսէն նոյնութեամբ
կարտատպենք հետեւեալը, որ նորահնար
կաղամարի մը վրայ կը ճառէ:

«Մէկ նորազիւտ կաղամարի մը վրայ
գրելու պատմելու անցած թղթին մէջ խոս-
տացայ, ամա տարակուսեր մնացերեմ, չէ՛ թէ
մէկ հերու տեղ մնէ տէ, ալեկ մը չեմ տե-
սեր, ասոր համար կը վախնամ գրելու, որ
օրն 'ի բուն ձեռքիս տակն է, գրիչս մէջնէ,
կամ թէ մէկ խըրթմըրթ բաներովն շինած,
որ մէկը հասկցնեմ պիտի տէյի տարակու-
սերեմ. որ մէկ հասարակ պարզ շինուածը-
մնէ, այլ ան է տարակոյսս որ մէկը օր աչ-
քով չէ՛ դիտած, ինտոր պիտի կարող ըլլայ
գըրածս հասկընալ տէյի, դէրեմ որչափ որ
խօսայ է ասոր մէջէն գրելը, անչափ գժար է
ասոր վրայ գրելը ու հասկցնելը: Ամա ինչ որ
էնէ, գրենք ամենայն պարզութեամբ, գիտ-
ցնենք մեր գրասէրներուն որչափ որ կարելի է:

«Երեւակայէ մէկ կըսկըլօր պուռնութի
խութի մը պէս, երեք մասի թանձրութեամբ
միակտուր պիլլօրէ աման մը. ասոր վրայի
երեսին օրթա տեղացը մէկ պիլլօրէ խունի
մը՝ գրիչի մը հաստութեան ծակով դէպի ա-
մանին մէջը իջած է, այնչափ որ խունիին
ծայրը, ամանին մէջի տակին չէ հասած, այլ
մէկ պղտի մասի հաստութեամբ մը բարձր է,
ու աս խունի ըսածնիս՝ ամանէն զատած բա-
ն մը չէ՛, այլ ամանին հետը կըպած՝ շիտակ
մէկ կտոր է: Աս ամանին երեսը՝ մէկ քովով,
կըլօր ծակ մըն է բացված, ու ծակին մէկ
պիլլօրէ թխելիք մը գըրված է, որ պէտք ե-
ղած ատենը՝ կը բանաս կը գոցես: Իշտէ աս
է նորագիտ հաղաւտը. հիմայ տեսնենք
ասոր գործածութիւնը:

«Երբոր մէջը միւրեքէպ կուգես լեցը-
նել, պէտք է որ բանաս ան պիլլօր թխելի-
քը, ու օրթայէն՝ ան խունիի պէս տեղէն՝
լեցընես միւրեքէպը կաղամարին մէջ ինչպան
բերանը. որ թէօր չի բանաս ան թխելիքը
նէ՛ չի լեցվիր՝ կաղամարըդ, դէրեմ մէջի օդը
տեղ չի տար միւրեքէպին, լեցվելէն ետեւ
գոցէ պիլլօր թխելիքով ծակը, եւ այլն:

«Աս կաղամարը աս տարի գաեր է մէկ
խելացի նիմցէ մը, ու սկսերն նիմցիստանի
գրագիրները շուտ մը գործածել, ու վէնե-
տիկցի մէկ պիլլօր ծի մը անտեղերաց ճամբայ
ընելիքէն աս տարի տեսեր է, առեր բերերէ
վենետիկ առոր օրինակը. ու կըլինէ մենծ,
պղտիկ, կըլօր, բառակուսի, ու գինը մէկ
յորշ, երկու յորշ, հինկ յորշ. մենծութեան ու
պիլլօրին կէօրէ:»

ԲԱՌԱՐԱՆ

ՀՈՎԱՀԱՐԻ ԵՒ ՁԵՌՆՈՅԻ

Ամենքի մէջ սիրաբանական լեզուի
պաշտօնն ունեցող ծաղիկները ասկէ ա-
ռաջ Արեւմուտքի մէջ մըցող մը ունեցեր
էին. հովահարը, որ Սպանիացի ամեն
դասակարգի տիկնանց անհրաժեշտ մէկ
ղարդն էր, անոր միջոցաւ համը խօ-
սակցութիւնը նոյն երկրին մէջ կատա-
րելութեան հասած էին. սակայն ամե-
նէն վերջը հնարուած ձեռնոցի լեզուն
այս երկուքն ալ դերազանցած է. վասն
զի ամեն տեղ ընդհանրացած է:

Տիկին մը, որ այլ ևս սիրոյ աշ-
խարհէն ձեռք քաշած է եղեր, հո-
վահարի և մանաւանդ ձեռնոցի շար-
ժամներուն նշանակութիւնը բացատրող
հետեւեալ փոքրիկ բառարանը հեղինա-
կեր է, զոր սիրայօժար մենք ալ կը
հրատարակենք, որպէս զի մեր ընթեր-
ցողները եթէ երբէք թատրոն կամ ըզ-
բօսավայր մը գտնուին, նոյն շարժում-
ներով տեսնուողներուն խօսից նշանա-
կութիւնը հասկնան:

ՀՈՎԱՀԱՐ

Գլխիվայր բռնուածը—Կորսուէ՛ ան-
դին:

Առանց շարժելու՝ կիսաբացը—Հա-
ճելի էք:

Առանց շարժելու՝ բոլորովին բացը—
Սրտանց կը սիրեմ զքեզ:

Ձեռնոց

Հաւանութիւն յայտնելու համար—
Ձեռնոցին մէկը աջ ձեռքէն ձախը տա-
նիլ:

Մերժողական—Ձեռնոցները աջ ձեռ-
քին մէջ ճմաթկել:

Անտարբերութիւն—Ձեռնոցը կէս
մը ձեռքին վրայ անցունել:

Գովս եկուր—Ձեռնոցը ձախ թեւին
շարնել:

Կը սիրեմ զքեզ—Կատուն շոյելու
պէս ձեռնոցը շոյել:

Փոխադարձաբար զքեզ կը սիրեմ—
Ձախ ձեռնոցին մէկ մատը անցունել:

Գովիններէս զգուշացիր—Ձեռնոցին
մէկը բթամատին փաթտել:

Բարկացած կամ զբաղեալ եմ—
Ձեռնոցները խաչաձև դնել կուրնքին
վրայ:

Նամակիդ կ'սպասեմ—Ձեռնոցները
լայնութեանը պլորելով, գրչի պէս բըռ-
նել ու շարժել:

Նամակդ ստացայ—Ձեռնոցը ծալ-
լեւէ ետքը բանալ եւ կարդալու պէս վը-
րան նայիլ:

Յտեսութիւն—Ձեռնոցները երկու
անգամ իրարու զարնել:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՕՂԻԿ ՏՈՒՏՈՒՆ

Մեր ընթերցողաց վաղածանօթ Օ-
ղիկ տուտուն, որ անցեալները գիշեր մը

հաճի Բանաբի կողմերը իր մուճակը
կորսնցուցեր էր, այս հինգշաբթի օրը
իրիկուան դէմ իր երեք աղջիկներուն
հետ բաղնիքէ վերադառնալու ատեն,
կը տեսնեն ոչ Մուսալլաի հրապարակը
10--20 կառապանք իրենց թայթօննե-
րով՝ հանրակառքը (օմնիպիւս) շրջապա-
տած, «Հա՛ պոյուրըն, հաճի Բանաբօ-
յա գատար պիր քիշի օն փարա եիր-
մի փարա» կը պոռան:

— Բա մայրիկ, կըսէ աղջիկներէն
մին, առապածինները (թռամբաին հետ
նիսպէթի են ինկեր, տէ՛յ հաճի Բա-
նաբօ մարդ գլուխ 20 փորա կը տա-
նին կոր. առաջ 100նոցէն վար չեն տա-
նիր եղեր:

— Է ինչ ընեմ, առապա նստող
չեմ քի, ինծի ֆայտա մը ըլլայ ըսեմ:

— Ճանըմ՝ մայրիկ, վրադ եւել-
ցուք փարա ունիս նէ՛ հայտէ սըռնց եր-
կուքին մէջ չիֆթ չիֆթ նստինք, հաճի
Բանաբօ երթանք. այսօր հինգշաբթի
է, պախճաին պանտա մուզիգան ալ
մտիկ կընենք:

— Աֆէրիմ Մաննիկ, աղէկ մտմը
տացիր. հայտէ մայրիկ, երթանք. սանկ
Մուսալլաին ճատտէի խահուէներուն
առջէն անցնինք. խրճ մը ընենք:

— Վաղ անցէք, ասանկ էրկան բա-
լակ հիյէթով առապա չի նոտուիր:

— Հիյէթնիս ինչունի քի. ձեռքեր-
նուս փոխնորդի բաքէթներուն համար կը
սես նէ՛ առապածիններուն կուտանք, քո-
վերնին կը դնեն, բաղնեցեւած ըլլալ-
նիս պէլլի չըլլար:

— Պօշ տեղը փարայէ պիտի ել-
լանք, մեղքը չէ՞. հէմ ունիմ քի...

— Գուզում մայրիկս, զարար չու-
նի. երբ չէ նէ, էպրոսիդ համար, պըղ-
տիկիս վրայ խենդ կելամ, կըլես. աս
ալ ասանկ օր մըն է. 2 զըշը ո՛ր չէ
գացեր. մեզի մի՛ կոտրեր. գուն հիմա
ճէպդ քանի՛ զրուշ ունիս.

— Մանտիլիս ծարը հարուրնոց
կէս ֆրանք մը ունիմ:

— Էյ կօզտէ. երկու առապաին

համար պիտի տաս 2 զրշ. 20 փարադալ կ'ենեկնայ :

— Հայտէ մայրիկս, հայտէ, մեզ մի՛ կոտորեր :

Վերջապէս Օղիկ տուտուն կը կա-կուղնայ և երկու կառքերու մէջ զոյգ-զոյգ կը բազմին :

Կառապանը. — Կիտէճէ՞քմիկիդ :

— Հէ՛ եա, հաճի Բանաքոյա չէ՛ք :

— Աֆէրիմ մայրիկս, ամեն ատեն առապա նստողի մը պէս, տառաթով մը «չէ՛ք» ըսաւ :

Կառապանք — Հա՛ կիտէյօրըդ. — ըսելով ձեռքը կը մտրակեն ու երեք վայրկեանէն կը հասնին ի հաճի Բանաքո :

Օղիկ տուտուն 100նոցը տալով, 20 փարա ետ կը պահանջէ :

— Մօրօ սէն տահա ալթմըշ փա-րա վերէճէքսին :

— Նի՞չին ծօ :

— Իքի առապամըզ իքիչէրտէն 4 զրշ. էտէր :

— Պէն պիլմէմ. ատամ պաշընա երիմի փարա տէմէտինիզ մի, տէօրթ քիչի իքի զրշ. էտէր :

— Էյի ամա, պիզ տէօրթ քիչիյի պիր արապայըլա կէթիբիբիդ իքիլիյէ. սիզ իսէ իքի առապա թուրթուսըդ. հաթթա էօնճէտէն կիտէճէ՞քմիկիդ սօր-տուդ իսէ՛ էվվէթ տէտինիզ :

— Պէն պիլմէմ. կէս ֆրանքնոց-տան զիյատէ փարամ եօզ տըր :

— Նէ՞ սէօյլէյօրսըն, մօրօ :

— Քա հու էկէք, տեսա՞ր հիմա կերած ապուրդ, խըզ ընենք ըսող Ման-նիկ. ես հարուրնոց մը ունիմ, աս մար-դը օտքը կոխեր 4 զրշ. կ'ուզէ կոր :

— Մի՛ պոռար, մայրիկ, ամօթ է, բան մը ույտուրէ :

— Ինչո՞վս ույտուրեմ քա :

— Հայտէ մօրօ, սէֆէրտէն պրադ-մա պիզի, կէճ գալտըզ :

— Մօ ա՛յ օղուլ, պիզ եանըլմըշըդ, սէֆէրինի գըրդ փարա զանն էթտիք :

— Գըրդ փարա՞ մը. . . պէօյլէ սէ-քիզ այագըլ տէօրթ թէքէրլագըլ պիր խըզվէթ քեարըն վա՞ր մը քի գըրդ փա-րա իչին պուրայա գատար կէլսին :

— Նէ՞ եաբալըմ, եանըլտըզ :

— Գ. եանըլմայայըտըն. տէօրթ-

լիւյի վերին պիզի եօլտան պրագմայըն սօնրա գարըշմայըզ, սահաթ հիսապընա գալգըշըրըզ :

— Քա աս ի՞նչ բաներ կըսէ կոր, թէփէս ի վար, բաղնէց էլած տաք տաք ջուրեր իջնալ պաշլայեց, գլխուս գրած պօյաս ֆայտա չպիտի ընէ. մե՛ղք փա-րային :

— Մայրիկ, մի՛ պոռար տէ՛ ույ-տուրէ :

— Էրկու աչքդ քէօրնա, ի՞նչը պիտի ույտուրեմ :

— Հայտէ մօրօ, նէ՞ եաբաճաղըդ. Անդրանիկ աղջիկը — Մայրիկ, տունը ստակ չունի՞նք մի :

— Ունինք ամա, հոստեղին համար ի՞նչ ֆայտա կընէ :

— Մեզի թող տուն տանին, հոն կը հանենք փարանին կուտանք. ուրիշ ճար չի կայ :

— Աղէկ ըսիր, աղջիկ, ծօ պիզի . . .

— Քա մայրիկ, պօշ պօշունա՞ հոս եկած պիտի ըլլանք. պանտան չպիտի՞ մտիկ ընենք :

— Պանտա ցաւերու գաս պիլէքի, հիմա ալազ ալազ կը պօռամ հա. տա-հա երես ունիս տէ կը խօրաթես. դուն աս մանտան մտիկ ըրէ քի խօսք չի հաս կնար. նա՛սըլ, աղւոր խըզ ըրի՛ր :

— Ոտքդ պագնեմ մայրիմ, հալ-խը գլուխնուս մի՛ ժողուեր :

— Մօ պիզի էվէ կէօթիւր. օրտա վերէճէիզ փարայը :

— Էվինիզ նէ՞րտէ :

— Զինկեանէ մահալլէսին. պախալ նիցային պիթիչիկ է :

— Հայտէին օթուրըն, ամա հէբ-սի եէտի զրշ. վերէճէքսինիզ. պուրտան էվէ գատար պատիհալա՞ մը կիտէճէիզ :

— Անկրծակներու գաս Մաննիկ, քի գլխուս աս փորձանքը բերիր. հայ-տէ տեղերնիս իյնանք. — ըսելով նորէն կառք կը նստին ու տուն երթալով 7 դահեկանը կը վճարեն :

Կըսեն թէ այն օրէն ի վեր Օղիկ տու-տուն այրած սրտով երկու խօսքին մէկը ոանկ կըսէ եղեր. «Խըզ ըրինք, սէօզտէ քէլէբիր առապա նստեցանք, թագիգէին մէջ կիւզէլիմ օխտնոցէ մը ելանք» :

Տ Պ Ա Ր Ա Ն
ՀԱՅԵԼԻ
ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք՝
Այցեւորմա, հասցէտոմա, նոմակա-
զլուխ, հրաւիրատոմա, բարենիշ. տոմ-
սակ եւայլն եւայլն թէ՛ պարզ եւ թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին-
գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբ.
բագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի եւ ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տէտրակ
մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կտնխիկ:



ԳՈՒՇԱԿ
ԱՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդաջոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
դիմել մեր խմբագրութեան:



ԿԱԼՎԱՆԻՍԻ



Ամեն տեսակ
տպագրական կա-
ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական եւ թէ՛ առեւտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են
եւ դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառաչուի դինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի վառնա Զիլինկիր-
էր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

ԱԶԴ



ԲԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու եւ պարերու:
Նաեւ վրձակ ընկերական:
Գին մէկ ֆրանք:



ՃԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆ ՃԵՆՆ Ե ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ գէմը

Հարսանեաց եւ խնձորներու սպաններ
ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գի-
ներով վարձու կը տրուին:

“Հայելի”ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը հաշուին գին տասը ֆր.
թղթատարի ծախքը մեր վրայ:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница “Взаимность” — Варна.